

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԵՓԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Ս. Աթուռյոս զոյգ վարժարանները — Ժառանգաւորաց և Թարգմանչաց — Յուսիս ընթացքին ունեցան իրենց ամալներէի հանդէսները: Ամսուն առաջին երկու կիրակիներուն կայացան Ս. Թարգմանչաց վարժարանի զոյգ հանդէսները, 3 Յունիսին Մանկապարտէզի, իսկ 10 Յունիսին՝ Երկրորդական բաժնի: Առաջինը տեղի ունեցաւ Մանուկեան Ժառնգ. վարժարանի ընդարձակ սրահին մէջ, ի ներկայութեան Հոգեշնորհ Հայրերու, ծնողներու և հետաքրքիր ազգայիններու:

Աւարտական Մաղիկ դասարանի, ինչպէս նաև Նախակրթարանի Ա. դասարանի փոքրիկները շնորհալիօրէն կատարեցին արտասանութիւններ, խմբերգներ, մարզանքներ, շուրջպարեր և լին: Թիշատակութեան արժանի էին մանաւանդ արամախօսութիւնները, որոնք խանդավառ ծափեր խլեցին ներկաներէն:

Վարժարանի բարեջան Տեսուչ Տ. Կիւրեղ Սրբազան, որ կը նախագահէր հանդէսին, աւարտին 8 ընթացաւարտ փոքրիկներուն վկայականները բաշխեց, խօսեցաւ պատշաճ խրատական մը և շնորհակալութիւն արտայայտեց փակեց Հանդէսը:

Երկրորդ Հանդէսը կայացաւ Ս. Թ. վարժարանի սրահին մէջ, նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր և ի ներկայութեան Գերշ. Եպիսկոպոս և Հոգւ. Վարդապետ Հայրերու և բաղձաթիւ հրաւիրեալներու:

Այս տարուան հանդէսը նուիրուած էր վարժարանի բացման 60ամեակին: Այդ նիւթին շուրջ խօսեցան երկուքը ընթացաւարտ պատանիներէն: Արտասանութիւնները — նաև խմբական — ինչպէս նաև խմբերգները եղան ըստ կարելոյն տպաւորիչ:

Դեղարուեստական յայտագրի աւարտին, Տեսուչ Տ. Կիւրեղ Եպիսկ. կարգաց մասեր տարեկան իր Տեղեկագրէն, և ապա հրաւիրեց Ն. Ամենապատուութիւնը որ բաժնէ վկայականները 13 երկսեռ շրջանաւարտներուն և մրցանակներ՝ ուսմանց և վարուց մէջ նշանակելի արդիւնք բերած աշակերտներուն: Ընթացաւարտներէն մին ուղերձ մը կարդաց և երգուեցաւ «Հրաժեշտի Երգ»ը:

Սրբազան Պատրիարքը իր փակման խօսքին մէջ շնչեց հայեցի կրթութեան բարիքն ու կարեւորութիւնը օտար այս օրերուն վրայ, իր գոհունակութիւնը յայտնեց Տեսչին և ուսուցչական կազմին բարի ջանքերով արդիւնաւորուած կրթական գործին և իր օրհնութեամբ փակեց հանդէսը: Ներկաներ ձայնակցեցան Ս. Աթուռյոս Մաղիքեցիին, որով աւարտեցաւ երկու ժամեր տևող ճոխ յայտագիրը:

* * *

16 Յունիս, Շաբաթ երեկոյ, Ալեքս և Մարի Մանուկեան հանդիսասրահին մէջ կայացաւ Ժառնգ. վարժարանի և Ընծայարանի Ամալներէի Հանդէսը, նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր և ի ներկայութեան Միաբանութեան անդամներուն և ստուարութիւ ժողովուրդի:

«Սիրտ ի սիրտ» վարժարանի քայլերգէն ետք գործադրուեցաւ կարճ այլ կսկիկ յայտագիր մը ուսանողութեան կողմէ: Տեսչին Բացման խօսքէն ետք, եղան արտասանութիւններ, խմբերգներ և ընթերցում (Շաւարշ Նարդուեթիէն): Վարդան Սրկ. ուղերձ մը կարդաց յանուն իր ընթացաւարտ դասընկերներուն:

Վարժարանի Տեսուչ Հոգւ. Տ. Մեսրոպ Վրդ. կարդաց ամփոփ տեղեկագիրք դպրոցական տարուան մը գործունէութեան: Երեք Սարկաւազներ, Մատթէոս Խորանան, Վարդան Պաւլսեան և Սարգիս Պետրոսեան, լրացուցած ըլլալով Ընծայարանի ընթացքը, ստացան իրենց աւարտական վկայականները Ամեն. Ս. Պատրիարք Հօր ձեռքէն: Իսկ յաջող աշակերտներ ստացան մրցանակ գիրքեր:

Ն. Ամենապատուութիւնը տպաւորիչ յորդորակուն մը տուաւ, յիշեցնելով որ մենք աղօթող, սարվող ու ծառայող Միաբանութիւն ենք: Հանդէսը փակուեցաւ Տեսուչական Աղօթքի երգեցողութեամբ: